

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ԴԱՐԵՀ ՎՇՏԱՍՊԻ
ԲԻՍԵՔՈՒՆՅԱՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐԵՎԵԼՅԱՆ
ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ԱՄԲԻՈՆ
ԴԱՍԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ

Ե Ր Ե Վ Ա Ն

902.6(55)

1000

491.5-71

ԳԱՐԵՀ ՎՇՏԱՍՊԻ ԲԻՍԵԹՈՒՆՅԱՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Քարգանուրյունը բնագրից առաջարանը
և ծանոթագրությունները՝ Գ. Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ

A II
33239



Հին պարսկերենի հիշատակարանները հասել են մեզ Աքեմենյան զինաստիպի թագավորների սեպագիր արձանագրութիւններով, որոնք ընդգրկում են 521—330 թվականների շրջանը:

Պարսկաստանի հին մայրաքաղաքներում՝ Պերսեպոլիսում, Սուզայում (Շոշ), Համադանում եղած արձանագրութիւններից բացի արձանագրութիւններ կան նաև այլ տեղերում, ժայռերի վրա, ինչպէս Բիսեթունյան և Ալվանդի արձանագրութիւնները:

Հին պարսկական սեպագիր արձանագրութիւններից մեծագույնը Դարեհ Վշտասպի Բիսեթունյան արձանագրութիւնն է, որը փորագրված է Բիսեթուն բարձրադիր ժայռի վրա, Քերմանշահի մոտակայքում. այն իրենից ներկայացնում է ժայռերի մի վիթխարի զանգված, որը հղկված է մեծ խնամքով և վրան փորագրված է ծավալուն արձանագրութիւն: Արձանագրութիւնը բաղկացած է հսկայական 9 սյունից, որոնցից 5 սյունակը գրված է հին պարսկերենով (76 պարագրաֆ, 414 տող), 3 սյունակը՝ էլամերեն և մեկ սյունակը՝ բաբելերեն:

Այս արձանագրութիւնն ստորին տողերը մեծ չափերով աղարտված են, հատկապես վերջին սյունը, որը միայն հին պարսկերեն է և թարգմանութիւն չունի:

Այս մեծ արձանագրութիւնն վրա մի ռելիեֆ է քանդակած. արքան, որին ուղեկցում են երկու զինվորներ, մի ոտքը դրել է իր առջև պառկած թշնամու վրա, որը աղերսալից ձեռքերը տարածել է դեպի նա և կարծես թե ներում է խնդրում, ետևից մոտենում են 9 հոգի՝ շղթայած, որոնք իրար հետ կապված են երկար պարանով, որ փաթաթված է նրանց վզին:

Բոլորի վրա ճախրում է, ղեմքով դեպի թագավորը դարձած վերին մեծը՝ Ահրամազդը՝ ճաճանշավոր զգեստներով:

Աճրամագրը իր ձեռքին բռնել է մի օղակ, որը հանդիսանում է իշխանութիան խորհրդանիշը: Նա կարծես իր ներկայութեամբ հաստատում է Դարեհի գործունեության ճշմարտությունը, որն այդ հրովարտական հենվում է նրա վրա, հաստատելով, որ այն, ինչ արել է ինքը, կատարված է Աճրամագրի կամքով:

Համառոտ հավելվածներից իմացվում է, որ այդ ֆիզուրաները ապստամբներ են, որոնց նվաճման մասին պատմվում է գլխավոր արձանագրության մեջ: Համաձայն այդ հավելվածներից մեկի՝ Դարեհի սպանության պատկաճ անձնավորությունը Մոզ Գառնապտանն է, որ ստում էր, ասելով՝ «Ես Բարդիան եմ, Կյուրոսի որդին. ես արքա եմ»:

Պարսկական արձանագրությունները հայտնի էին հին հույներին, որոնցից Հերոդոտը, Դիոդորոսը, Ստրաբոնը և այլք հիշատակում են այդ արձանագրությունները:

Հին ժամանակներից պարսկական սեպագրերի մասին եղել են տարբեր կարծիքներ: Օրինակ՝ Նույն պատմիչ Դիոդորոսը Բիսեթունյան արձանագրության մասին գրում է; որ այն պատկանում է Շամիրամ թագուհուն: Նա Դարեհին շփոթում է Շամիրամի հետ, իսկ արձանագրության մեջ պատկերված 11 հոգուն (որոնցից երկուսը Դարեհի սպասավորներն են, իսկ 9-ը ապստամբները) համարում է թագուհու զորախումբը:

Եվրոպայում պարսկական սեպագրությունները հայտնի դարձան մոտ 16-րդ դարում:

Պարսկական հնագույն սեպագրերից գիտնականներն առաջին անգամ ուսումնասիրել են Քախթի Զամշիդի (Պերսեպոլիսի) արձանագրությունները: Չնայած այն բանին, որ Բիսեթունյան արձանագրությունները եղած արձանագրություններից մեծագույնն են, սակայն նրանց՝ բարձրագույն հսկայական ժայռի գագաթին փորագրված լինելու հանգամանքը երկար ժամանակ հնարավորություն չի տվել ձեռնամուխ լինելու դրանց ուսումնասիրությանը: Նույնիսկ այսօր էլ, գիտության և տեխնիկայի զարգացման պայմաններում, նրանց ընթերցումը կապված է որոշ դժվարությունների հետ:

Բիսեթունյան արձանագրությունները առաջին անգամ

1836 թ. պատճենվել են Հենրի Ռաուլինսոնի (Henry Rawlinson) կողմից: Անգլիական բանակի սպա Ռաուլինսոնը 1833 թ. որպես զինվորական խորհրդական գործուղվում է Իրան:

1835 թ. նա պատճենում է նախ Համազանի Ալվանդ լեռան լանջին գտնված արձանագրությունը, իսկ 1835—1837 թ. թ. պատճենում ու թարգմանում է նաև Բիսեթունյան արձանագրության մի մասը: Սակայն շուտով նա նոր նշանակում ստանալով մեկնում է Պարսկաստանից և միայն 1844 թվականին կրկին վերադառնալով Քերմանշահ՝ շարունակում է իր սկսած դժվարին գործը:

Ռաուլինսոնը արձանագրության պատճենման մի մասը կատարում է անձամբ, ժայռի գագաթից պարանով կախ ընկած, մի մասն էլ մի բուրդ երեխայի միջոցով, որը նույնպես պարանով կապված, ժայռի գագաթից ցած իջեցնելով, Ռաուլինսոնի ցուցումով թուղթը սեպանիշներին սեղմելով կատարում է պատճենահանումը:

1846—1847 թ. թ. Ռաուլինսոնին հաջողվում է հրատարակել Բիսեթունյան արձանագրության իր կողմից պատճենված, վերծանված ու թարգմանված ամբողջական տեքստը:

Ռաուլինսոնից հետո Բիսեթունյան արձանագրություններով զբաղվեցին և նրա ընթերցման ու թարգմանության մեջ ճշտումներ մտցրեցին մի շարք գիտնականներ, որոնցից հիշատակության արժանի են հատկապես Վիլյամ Զակսոնը, Կինգը և Տոմպսոնը, Տոլմանը, Վեյսբախը, Կամբերոնը և Կենտը:

Բիսեթունյան արձանագրությունից առանձին հատվածներ առաջին անգամ ուսերեն լեզվով թարգմանել է ակադ. Կ. Գ. Զալեմանը:

Արձանագրության լրիվ տեքստը թարգմանել են Ա. Ա. Յրեյմանը, ինչպես նաև Վ. Ի. Աբահը:

Հին պարսկական արձանագրությունները ունեն պատմական մեծ արժեք: Նախ նրանց շնորհիվ մենք տեղեկություններ ենք ստանում Իրանի նախնական պատմության մասին բուն աղբյուրից: Այդ արձանագրությունների տված տեղեկությունները ամենահավաստի են, քանի որ նրանք փո-

բազրված լինելով ժայռերի վրա, ոչ մի նորամուծութեան չեն եկեղծարկել և մեզ հասել են անազարտ ձևով:

Այդ արձանագրութիւնների շնորհիվ մենք զանազան տեղեկութիւններ ենք ստանում նաև հարևան ժողովուրդների պատմութեան մասին: Ընդլայնվում են նաև մեր աշխարհագրական ու դիցաբանական գիտելիքները:

Ինչպես հայտնի է, հայ և պարսիկ ժողովուրդները փոխհարաբերութեան մեջ են մտել իրենց պատմական կյանքի հենց արշալույսին: Այս փոխհարաբերութիւնների մասին առաջին հավաստի տեղեկութիւններին մենք ծանոթանում ենք Դարեհի թողած, հենց Բիսեթունյան ընդարձակ արձանագրութեան շնորհիվ, որը հայ ժողովրդի հնագույն պատմութեան կարևորագույն աղբյուրներից մեկն է:

Բիսեթունյան արձանագրութեան արմեններին վերաբերող մասը (վեց պարագրաֆ) հայերեն թարգմանել է Կ. Բասմաջյանը¹, որը և ամբողջութեամբ մեջ է բերված Հ. Մանանդյանի «Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան» Ա հատորում:

Նկատի ունենալով նշված արձանագրութեան մշուս հատվածների կարևորութիւնն ու նրանց հայերեն թարգմանութեան բացակայութիւնը, որոշեցինք հայերեն թարգմանել ամբողջ արձանագրութիւնը:

Թարգմանութիւնը կատարել ենք ընագրից: Թարգմանութեան ժամանակ աշխատել ենք, ըստ հնարավորին, ընագիրն արտահայտել ճիշտ, պահպանելով նրա ոճն ու կոչորիտը: Անձնական անունները բերել ենք հին պարսկերենի արտասանութեամբ, բացառութեամբ մի քանիսի, այն է՝ Ահրամազդ, Դարեհ, Արեմենյան, Կամբիս:

Աշխարհագրական և էթնիկական անվանումները բերված են սովորական հանրահայտ ձևով, իսկ հազվագեղ հանդիպողները՝ հին պարսկերենի հնչմամբ, տալով նրանց համապատասխան բացատրութիւնը տողատակով:

¹ Տե՛ս Կ. Բասմաջյան, «Դարեհի արշալանքն ի հայս» բանասեր, հատ. Ա, Պարիս, 1899:

§ 1

Ես (եմ) Դարեհը, մեծ արքան, արքաների արքան, Փարսի՛ արքան, երկրների թագավորը, Վշտասպի որդին, Արեմենյան Արշամի թոռը:

§ 2

Դարեհ թագավորն ասում է.— Իմ հայրը Վշտասպն է, Վշտասպի հայրը՝ Արշամը, Արշամի հայրը՝ Արշարամնեն, Արշարամների հայրը՝ Չիշփիշը, Չիշփիշի հայրը՝ Արեմենը:

§ 3

Դարեհ թագավորն ասում է.— Այն բանի համար ենք մենք կոչվում Արեմենյան, որ վաղուց ի վեր ճանաչված ենք, վաղուց ի վեր մեր սերունդը թագավորական սերունդ է:

§ 4

Դարեհ թագավորն ասում է.— Ութ հոգի իմ տոհմից անցյալում թագավորել են, ես եմ իններորդը. ինը հոգի հաջորդարար թագավոր ենք:

§ 5

Դարեհ թագավորն ասում է.— Շնորհիվ Ահրամազդի² ես թագավոր եմ. Ահրամազդը ինձ թագավորութիւն շնորհեց:

§ 6

Դարեհ թագավորն ասում է.— Սրանք են այն երկրները, որ իմ հպատակը եղան, Ահրամազդի շնորհիվ ես նրանց թա-

¹ Պարսկաստան:

² Իրանական պանթեոնի զլխավոր աստվածը:

գավորն եմ. Փարս, հուլիան, Բաբելոն, Ասուրեստան, Արաբիա, Մուղրայ¹. այն երկրները, որ ծովում են, Սպարդա², Հունաստան, Միդիա, Արմինա, Կապադովկիա, Պարթևաստան, Ջրանկա³, Հարուիվա⁴, Խորեզմ Բակարիա, Սողդ, Գանդարա⁵, Սազաստան (Սկյուֆիա), Սատագուշ⁶, Արախոզիա (Հարվաթ)⁷, Մակա⁸ բոլորը միասին 23 երկիր:

§ 7

Գարեհ թագավորն ասում է.— Սրանք են այն երկրները, որ հպատակվեցին ինձ, Ահրամազդի շնորհիվ իմ ժառանգրն էին, ինձ բաժ (հարկ) էին բերում, այն ինչ (որ) ինձնից ասվում էր վերջեր կամ ցերեկը, (ներանք) այն էին կատարում:

§ 8

Գարեհ թագավորն ասում է.— Այս երկրների մեջ այն մարդուն, որը բարեկամ էր, նրան լավ հարգեցի, նրան, որ թշնամի էր, խիստ պատժեցի: Ահրամազդի շնորհիվ սրանք են այն երկրները, որոնցում իմ հրամանները կատարեցին: Ինչ որ իմ կողմից ասվում էր նրանց այն էին անում:

§ 9

Գարեհ թագավորն ասում է.— Ահրամազդն ինձ այս թագավորությունը շնորհեց, Ահրամազդն ինձ օգնեց, մինչև այս թագավորությանը տիրացա, Ահրամազդի շնորհիվ այս թագավորությունը ունեմ:

¹ Եգիպտոս:

² Մարդիա, Մափորդ:

³ Ժամանակակից Սևաստան:

⁴ Ժամանակակից Հերաթը:

⁵ Գադնե:

⁶ Քարուշ:

⁷ Դանդահար:

⁸ Ժամանակակից Մոկրան.— Պարսկաստանի և Բելառուսի հարավային մասը, Հնդկական օվկիանոսի մաս:

§ 10

Գարեհ թագավորն ասում է.— Այս է իմ արածը, այն բանից հետո, երբ ես թագավոր դարձա: Մեր սերնդից Կյուրոսի որդի Կամբիս անունով մեկը թագավոր էր, այն Կամբիսին Բարդիյա անունով մի եղբայր կար, Կամբիսի հետ մի հորից ու մի մորից: Հետո Կամբիսը Բարդիյային սպանեց: Երբ Կամբիսը Բարդիյային սպանեց, ժողովուրդը տեղյակ չէր, որ Բարդիյան սպանվել է, հետո Կամբիսը Մուղրայ գնաց: Երբ Կամբիսը Մուղրայ գնաց, ժողովուրդը թշնամացավ. ուստի սուրը երկրում շատ տարածվեց, թե՛ Փարսում, թե՛ Մեդիայում և թե՛ ուրիշ երկրներում:

§ 11

Գարեհ թագավորն ասում է.— Հետո կար մի մարդ մոգ, Գառամատա անունով, նա Փայիշիահուվարդիայում ապստամբեց. Արակազդի շնորհով մի սար կա՝ այնտեղից. Վիյախնա ամսի 14-ն էր¹, երբ ապստամբեց. նա ժողովրդին այսպես խաբեց: «Ես Բարդիյան եմ՝ Կյուրոսի որդին, Կամբիսի եղբայրը»: Ուստի ամբողջ ժողովուրդը ըմբոստացավ, Կամբիսից դեպի նրա կողմը գնացին և՛ Փարսան, և՛ Մեդիան, և՛ այլ երկրներ նա խլեց: Գարամապդա ամսի 9-ն էր², երբ այսպես թագավորությունը վերցրեց (խլեց): Հետո Կամբիսը ինքնասպանությունը մեռավ:

§ 12

Գարեհ թագավորն ասում է.— Այս թագավորությունը, որ Գառամատա մոգը Կամբիսից վերցրեց, վաղուց ի վեր մեր սերունդինն էր, հետո Գառամատա մոգը Կամբիսից խլեց և՛ Փարսը, և Մեդիան, և՛ այլ երկրներ. նա (սրանք) յուրացրեց և իբր անձնականը դարձրեց. նա թագավոր դարձավ:

¹ Մարտ ամիս, 522 մ. թ. ա. Այս և հետագա թվականները բերվում են ըստ Կյուրիի:

² Ապրիլ ամիս, 522 մ. թ. ա.:

Գարեհ թագավորն ասում է.— Չկար մի մարդ ո՛չ փարսեցի, ո՛չ մեդացի, ոչ մեր սերնդից որևէ մեկը, որ այն Գառմատա մոզից իշխանությունը կարողանար վերցնել: Ժողովուրդը նրա բռնությունից վախենում էր: Նա սպանեց շատ ժողովուրդներ, որոնք հնուց (անցյալում) Բարդիային էին ճանաչում. այն բանի համար էր ժողովրդին սպանում, որ «չլինի թե ինձ ճանաչեն, որ ես Բարդիան չեմ՝ Կյուրոսի որդին». որևէ մեկը հանգսնություն չուներ որևէ բան Գառմատա մոզի հասցեին (վերաբերյալ) ասելու, մինչև որ ես հասա: Ես Ահրամազդին օգնության կանչեցի: Ահրամազդն ինձ օգնեց. Բազայադիը ամսի 10-ն էր¹, Հետո մի քանի մարդով սպանեցի այն Գառմատա մոզին և այն մարդկանց, որոնք նրա առաջին բարեկամներն էին: Նիսայա գավառում Սիկայավատիչ անունով բերդ կա, այնտեղ նրան սպանեցի, նրա թագավորությունը ես վերցրի: Ահրամազդի շնորհիվ ես թագավոր դարձա: Ահրամազդն ինձ թագավորություն շնորհեց:

§ 14

Գարեհ թագավորն ասում է.— Թագավորությունը, որ մեր սերնդից վերցված էր, այն ես վերականգնեցի (իր տեղը դրեցի), ես նրա թագավորական գահը ամրապնդեցի, ինչպես անցյալում էր, այնպես էլ արեցի: Այն տաճարները, որ Գառմատա մոզը ավերեց, ես վերականգնեցի, ժողովրդի արտավայրը, կալվածքը, ունեցվածքը և ամեն ինչ, որ Գառմատա մոզը վերցրել էր (հետ վերցրեցի), ես ժողովրդին իր տեղը ամրացրի թե՛ մեդացիներին, թե՛ այլ երկրների (ժողովրդրդին): Ինչպես անցյալում, այնպես ես ինչ որ վերցված էր, ետ բերեցի. Ահրամազդի շնորհիվ ես այս (գործերը) արեցի. ես ջանացի Ահրամազդի շնորհիվ, որպեսզի Գառմատա մոզը չվերցնի թագավորական գերդաստանը, որը մերն է:

¹ Սեպտեմբեր ամիս, 522 մ. թ. ա.:

Գարեհ թագավորն ասում է.— Այս է իմ արածը, այն բանից հետո, երբ թագավոր դարձա:

§ 16

Գարեհ թագավորն ասում է.— Երբ որ (այն ժամանակ, երբ) Գառմատա մոզին սպանեցի, հետո Աթրինա անունով մի մարդ՝ Ուպադարամայի որդին, Խուզեստանում ապստամբեց, ժողովրդին այսպես ասաց. «Ես Խուզեստանի թագավորն եմ», ուստի Խուզեստանցիները ապստամբեցին և դեպի այն Աթրինան ղնացին: Նա Խուզեստանում թագավոր դարձավ. և մեկ բարեխոնացի մարդ նազինտաբիր անունով, Աինիրայի որդին, Բաբելոնում ապստամբեց, ժողովրդին այսպես սուտ ասաց.— «Ես Նարուկուդրաշարան եմ, որդին Նարունայիտայի», ուստի Բաբելոնի ժողովուրդը բոլորը դեպի այն նազինտաբիրի (կողմը) անցավ: Բաբելոնը ապստամբեց, Բաբելոնի թագավորությունը նա վերցրեց:

§ 17

Գարեհ թագավորն ասում է.— Հետո ես մեկնեցի Խուզեստան, այն Աթրինան կապված ինձ մոտ բերվեց (և) ես նրան գլխակցեցի:

§ 18

Գարեհ թագավորն ասում է.— Հետո ես Բաբելոն գնացի, դեպի այն նազինտաբիրը, որը իրեն նարուկուդրաշարա էր կոչում. նազինտաբիրի բանակը Տիգրիսը (իր ձեռքում) ուներ, այնտեղ կանգնած էր, և նա ուներ նավեր: Հետո ես բանակը տիկերի վրա դրեցի, մյուսներին ձիով դուրս տարա. Ահրամազդն ինձ օգնեց: Ահրամազդի շնորհիվ Տիգրիսն անցա. այնտեղ նազինտաբիրի բանակը բավականին ջարդեցի: Աթրիադիա ամսի 26-ն էր¹, երբ ճակատամարտը տեղի ունեցավ:

¹ 14 սեպտեմբերի 522 մ. թ. ա.:

§ 19

Դարեհ թագավորն ասում է.— Հետո ես Բաբելոն մեկնեցի: Դեռ Բաբելոնին չէի հասել, Զազանա անունով քաղաքում Ուֆրատովայի՝ վրա (Երկայնությամբ), այնտեղ այն նազինաաբիրը, որ իրեն նարուկուղրաշարա էր կոչում, բանակով ճակատամարտի իմ դեմ եկավ: Հետո ճակատամարտ տվեցինք. Ահրամազդն ինձ օգնեց, շնորհիվ Ահրամազդի նազինաաբիրի բանակից բավականին սպանեցի, մյուսները ջուրը նետվեցին, և ջուրը նրանց տարավ. Անամակա ամսի 2-ն էր²: Երբ ճակատամարտը տեղի ունեցավ:

ԵՐԿՐՈՐԴ ԱՅՈՒՆԱԿ

§ 20

Դարեհ թագավորն ասում է.— Հետո նազինաաբիրը սակավաթիվ հեծյալներով զիմեց փախուստի և հասավ Բաբելոն: Ուտի ե՛ս ուղևորվեցի Բաբելոն: Ահրամազդի շնորհիվ ես թե՛ Բաբելոնը գրավեցի, և թե՛ նազինաաբիրին գերեցի: Այնուհետև այն նազինաաբիրին Բաբելոնում սպանեցի:

§ 21

Դարեհ թագավորն ասում է.— Իմ՝ Բաբելոնում գտնված ժամանակ իմ դեմ ապստամբեցին հետևյալ երկրները՝ Փարսը, Խուզեստանը, Մեդիան, Ասորեստանը, Եգիպտոսը, Մարգիանան³, Սաթագուշը⁴, Սկյութիան:

§ 22

Դարեհ թագավորն ասում է.— Մի մարդ Մարտիյա անունով, Չինչիխրայի որդին, Քուզանակա անունով քաղաք կա Փարսում: Նա (Մարտիյան) տիրում էր այնտեղը: Նա Խուզեստանում

¹ Եփրատ գետը:

² 18 ղեկտեմբերի 522 մ. թ. ա.:

³ Մերդ:

⁴ Փենջար:

տանում ըմբոստացավ. ժողովրդին այսպես ասաց. «Ես Իմանիշն եմ, Խուզեստանի թագավորը»:

§ 23

Դարեհ թագավորն ասում է.— Այն ժամանակ ես Խուզեստանի հետ հաշտության մեջ էի: Խուզեստանցիները ինձնից վախեցան, այն Մարտիային բռնեցին, այն որ նրանց գերադույնն էր, նրան սպանեցին:

§ 24

Դարեհ թագավորն ասում է.— Մի մարդ Ֆրավարտիշ անունով, Մեդացի, Մեդիայում ապստամբեց: Ժողովրդին այսպես ասաց. «Ես Խշաթրիտան եմ, Հովախշաթրիայի՝ սերնդից: Հետո Մեդական բանակը, որ արքունիքում էր, ապստամբեց իմ դեմ և անցավ այն Ֆրավարտիշի կողմը: Նա Մեդիայում թագավոր դարձավ:

§ 25

Դարեհ թագավորն ասում է.— Փարսի և Մեդիայի բանակը, որը ինձ հետ էր, սակավաթիվ էր: Հետո ես բանակը ուղարկեցի, Վիդարնա անունով Փարսեցի իմ ծառային նրանց վրա հրամանատար կարգեցի և այսպես նրանց պատվիրեցի. «Գնացե՛ք, ջախջախեցե՛ք այն մեդական բանակը, որը իրեն իմը չի ճանաչում»: Հետո այն Վիդարնան բանակի հետ մեկնեց: Երբ Մեդիա հասավ, Մարուշ անունով քաղաք կա Մեդիայում, այնտեղ նա Մեդացիներին ճակատամարտ տվեց: Նա ով մեդացիների գերադույնն էր, գերվեց: Ահրամազդը ինձ օգնեց. շնորհիվ Ահրամազդի իմ բանակը շատ մարդ կոտորեց ապստամբ բանակից: Անամակա ամսի 27-ն էր¹, երբ ճակատամարտը տեղի ունեցավ: Դրանից հետո իմ բանակը

¹ Կիսկար:

² 12 հունվարի 522 մ. թ. ա.:

ինձ սպասեց Մեղիայում Կոմպարա կոշվող վայրում, մինչև որ ես հասա Մեղիա:

§ 26

Գարեհ թագավորն ասում է.— Գաղարշիշ անունով հայ իմ ծառային¹ ես ուղարկեցի Արմինա²: Այսպես նրան պատվիրեցի «Գնա՛ և ջախջախի՛ր այդ ապստամբ բանակը, որը ինձ չի հպատակվում»: Հետո Գաղարշիշը գնաց: Երբ նա հասավ Արմինա, ապստամբները հավաքվեցին և դուրս ելան Գաղարշիշի դեմ (նրան) ճակատամարտ տալու համար: Արմինայի մեջ Զուղա անունով մի ավան կա, ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ: Ահրամազդն ինձ օգնեց: Ենորհիվ Ահրամազդի իմ բանակը բավական մարդ սպանեց ապստամբ բանակից: Թուրավահարա ամսի 8-ն էր³, երբ այսպես ճակատամարտը տեղի ունեցավ:

§ 27

Գարեհ թագավորն ասում է.— Երկրորդ անգամ ապստամբները հավաքվեցին և նորից դուրս ելան Գաղարշիշի դեմ ճակատամարտելու: Տիգրա անունով մի բերդ կա Արմինայում. ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ: Ահրամազդն ինձ օգնեց, Ահրամազդի շնորհիվ իմ բանակը այն ապստամբ բանակից բավական մարդ սպանեց: Թուրավահարա ամսի 18-ն էր⁴, երբ ճակատամարտը տեղի ունեցավ:

§ 28

Գարեհ թագավորն ասում է.— Երրորդ անգամ ապստամբները հավաքվեցին և նորից դուրս ելան Գաղարշիշի դեմ ճակատամարտի: Ուլամա անունով մի բերդ կա Արմինայում.

¹ Ստորադրյալ:

² Հայաստան:

³ 21 մայիսի 521 թ. ա.:

⁴ 31 մայիսի 521 թ. ա.:

ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ. Ահրամազդն ինձ օգնեց: Ահրամազդի շնորհիվ իմ բանակը այն ապստամբ բանակից բավական մարդ սպանեց: Թախարշիշ ամսի 9-ն էր¹, երբ ճակատամարտը տեղի ունեցավ: Հետո Գաղարշիշը մնաց Արմինայում, մինչև ես հասա Մեղիա:

§ 29

Գարեհ թագավորն ասում է.— Այնուհետև Վառամիսա անունով պարսիկ իմ ծառային ես ուղարկեցի Արմինա, (և) այսպես նրան պատվիրեցի. «Գնա՛, ջախջախի՛ր այն ապստամբ բանակը, որն իրեն իմը չի ճանաչում»: Ուստի Վառամիսան գնաց: Երբ նա հասավ Արմինա, ապստամբները հավաքվեցին և դուրս ելան Վառամիսայի դեմ ճակատամարտի: Ասուրեստանում Իզաբա անունով մի վայր կա. ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ: Ահրամազդի շնորհիվ իմ բանակը այն ապստամբ բանակից բավականին մարդ սպանեց: Անամակա ամսի 15-ն էր², երբ ճակատամարտը տեղի ունեցավ:

§ 30

Գարեհ թագավորն ասում է.— Ապստամբները երկրորդ անգամ հավաքվեցին (և) դուրս ելան Վառամիսայի դեմ ճակատամարտի: Արմինայում Աուտիարա անունով մի գավառ կա. այնտեղ նրանք ճակատամարտ տվեցին: Ահրամազդն ինձ օգնեց. Ահրամազդի շնորհիվ իմ բանակը այն ապստամբ բանակից բավականին մարդ սպանեց: Թարավահարա³ ամսի վերջն էր, երբ ճակատամարտը տեղի ունեցավ: Հետո Վառամիսան մնաց Արմինայում, մինչև ես հասա Մեղիա:

¹ 12 հունիսի 521 թ. ա.:

² 31 դեկտեմբերի 522 թ. ա.:

³ Հունիս, 521 թ. ա.:

Գարեհ թագավորն ասում է.— Հետո ես դուրս եկա Քա-
բելանից և ուզեցորվեցի Մեղրիա: Երբ ես ժամանեցի Մեղրիա, մի
քաղաք կա Մեղրիայում Կունդուրուշ անունով, այնտեղ այն
Ֆրավարտիշը, որը իրեն Մեղրիայի թագավոր էր կոչում, բա-
նակով առաջ շարժվեց իմ դեմ ճակատամարտելու: Ապա մենք
ճակատամարտ ավելեցինք: Ահրամազդն ինձ օգնեց. Ահրամազ-
դի շնորհիվ Ֆրավարտիշի բանակից ես բավական մարդ սպա-
նեցի: Աղուկանիշ ամսի 25-ն էր¹, երբ ճակատամարտը տեղի
ունեցավ:

Գարեհ թագավորն ասում է.— Հետո այն Ֆրավարտիշը
սակավաթիվ հեծյալներով փախավ և ընթացքն ուղղեց (դե-
պի) Ռագա² կոչվող վայրը Մեղրիայում: Այն ժամանակ ես բա-
նակը նրա ետևից ուղարկեցի: Ֆրավարտիշը գերվեց և ինձ
մոտ բերվեց: Ես նրա թե՛ քիթը, երկու ականջները, լեզուն
կտրեցի, և թե՛ նրա աչքը հանեցի. նրան իմ դարբասի մոտ
շղթայված պահեցին (և) ամբողջ ժողովուրդը նրան տեսավ,
որից հետո Հագմաթանայում³ նրան ցից հանեցի. ինչպես նաև
այն մարդկանց, որոնք նրա ամենամեծավորներն էին,
նրանց Հագմաթանայում մի բերդի մեջ կախեցի:

Գարեհ թագավորն ասում է.— Չիսսանթախմա անունով
մի մարդ, Ասագարթցի, իմ դեմ ապստամբեց. ժողովրդին
այսպես ասաց. «Ես Ասագարթիայի թագավորն եմ, Հուլախ-
շաթրիայի⁴ սերնդից»: Հետո ես Փարսի և մեղական բանակը
ուղարկեցի. թախմասպադա անունով մի մեղացու, իմ ծառա-

¹ 7 մայիսի 521 թ. թ. ա.:

² Ժամանակակից Անյը:

³ Համազան, Էքրաթան:

⁴ Կիսիսար:

յին (Հպատակին) նրանց (վրա) հրամանատար կարգեցի (և)
այսպես նրանց ասացի. «Գնացեք և ապստամբ բանակը, որ
իրեն իմը չի ճանաչում, ջարդեցե՛ք»: Ուստի թախմասպադան
բանակով գնաց և պատերազմեց Չիսսանթախմայի դեմ: Ահ-
րամազդն ինձ օգնեց: Ահրամազդի շնորհիվ իմ բանակը այն
ապստամբ բանակը ջախջախեց, Չիսսանթախմային բռնեց և
ինձ մոտ բերեց: Հետո ես նրա թե՛ քիթը, թե՛ երկու ականջ-
ները կտրեցի, ինչպես նաև նրա աչքը հանեցի: Նրան իմ դար-
բասի մոտ շղթայված պահեցին, և ամբողջ ժողովուրդը նրան
տեսավ: Հետո ես նրան Արբելում¹ ցից հանեցի:

Գարեհ թագավորն ասում է.— Այս է իմ կատարածը Մե-
ղիայում:

Գարեհ թագավորն ասում է.— Պարթևն ու Վարկանան² իմ
դեմ ապստամբեցին և հարեցին Ֆրավարտիշին: Իմ հայրը՝
Վշտասպը, Պարթևստանում էր: Ժողովուրդը նրան լքեց (և)
ըմբոստացավ: Այն ժամանակ Վշտասպը իրեն հավատարիմ
(մնացած) բանակի հետ դուրս ելավ, Վիշպաուազատիշ քա-
ղաք կա Պարթևստանում, այնտեղ ճակատամարտի պարթև-
ների դեմ: Ահրամազդն ինձ օգնեց. Ահրամազդի շնորհիվ Վըշ-
տասպի բանակը ապստամբ բանակից բավական մարդ սպա-
նեց: Վիշպանա ամսի 22-ն էր³, երբ ճակատամարտը տեղի
ունեցավ:

A II
33239


ԵՐՐՈՐԴ ՍՅՈՒՆԱԿ

Գարեհ թագավորն ասում է.— Ապա ես Ռագայից Վըշ-
տասպի մոտ ուղարկեցի Փարսի բանակը. հենց որ այն բա-

¹ Քաղաք է արևելյան Ասուրեստանում (ժամանակակից Էրբիլ):

² Վրկան, Նոր պարսիկերեն, Գորգան:

³ 8 մարտի 521 թ. թ. ա.:



նակը Վշտասպի մոտ հասավ, Վշտասպը այն բանակը վերցրեց և առաջ շարժվեց Պատիզրաբանա կոչվող մի քաղաք կա Պարթևստանում. այնտեղ նա ապստամբների դեմ ճակատամարտ տվեց: Ահրամազդն ինձ օգնեց: Ահրամազդի շնորհիվ Վշտասպը այն ապստամբ բանակից բավական մարդ սպանեց: Գարմապադա ամսի 1-ն էր¹, երբ ճակատամարտը տեղի ունեցավ:

§ 37

Գարեհ թագավորն ասում է.— Այնուհետև երկիրը դարձավ իմը: Այս է իմ կատարածը Պարթևստանում:

§ 38

Գարեհ թագավորն ասում է.— Մարգիանա² անունով մի երկիր կա, այն իմ դեմ ապստամբեց: Ֆրադա անունով մի մարդ՝ Մարգիանցի, նրան հռչակեցին իրենց գերագույն (զեկավար): Ապա ես Գադարշիշ անունով մի փարսեցի, իմ ծառային Բակտրիայի սատրապին դեպի նա ուղարկեցի (և) այսպես պատվիրեցի. «Գնա և ջախջախի այդ ապստամբ զորքը, որ ինձ չի հպատակվում»: Ապա Գադարշիշը բանակով առաջ ընթացավ և Մարգիանցիներին ճակատամարտ տվեց: Ահրամազդն ինձ օգնեց: Ահրամազդի շնորհիվ իմ բանակը այն ապստամբ բանակից բավական մարդ սպանեց: Ասսիյադիյա ամսի 23-ն էր³, երբ ճակատամարտը տեղի ունեցավ:

§ 39

Գարեհ թագավորն ասում է.— Այնուհետև երկիրը դարձավ իմը: Այս է իմ կատարածը Բակտրիայում:

¹ 12 հուլիսի 521 թ. թ. ա.:

² Մերվ (Միջին Ասիայում):

³ 10 դեկտեմբերի 521 թ. թ. ա.:

§ 40

Գարեհ թագավորն ասում է.— Վահյազդատա անունով մի մարդ, որը գտնվում էր Յուախյայի թարավա քաղաքում, Փարսում: Նա երկրորդ անձն էր, որ ապստամբեց Փարսում: Ժողովրդին այսպես ասաց. «Ես Բարդիյան եմ Կուրոսի որդին»: Այդ ժամանակ Փարսի բանակը, որը մայրաքաղաքում էր, հրաժարվեց հավատարմությունից (դավաճանեց) իմ դեմ ապստամբեց և այն Վահյազդատայի կողմն անցավ: Նա Փարսում թագավոր դարձավ:

§ 41

Գարեհ թագավորն ասում է.— Հետո ես ուղարկեցի ինձ հետ եղած Փարսի և մեդական բանակը: Արտավարդիյա անունով մի փարսեցի, իմ ծառային նրանց վրա հրամանատար կարգեցի: Փարսի մի այլ բանակ ինձ հետ Մեդիա գնաց: Հետո Արտավարդիյան բանակով առաջ ընթացավ դեպի Փարս: Հետո որ հասավ Փարս Ռախա անունով քաղաքը, որ է՝ Փարսում այնտեղ այն Վահյազդատան, որը իրեն Բարդիյա էր կոչում բանակով դուրս ելավ Արտավարդիյայի դեմ կռվելու: Հետո նրանք ճակատամարտ տվեցին: Ահրամազդն ինձ օգնեց: Ահրամազդի շնորհիվ իմ բանակը Վահյազդատայի բանակից բավական մարդ սպանեց: Թուրավահարա ամսի 12-ն էր¹, երբ ճակատամարտը տեղի ունեցավ:

§ 42

Գարեհ թագավորն ասում է.— Հետո այն Վահյազդատան սակավաթիվ հեծյալներով փախավ Փիշիյավադա: Այնտեղից նա մի բանակ վերցրեց (և) նորից ելավ Արտավարդիյայի դեմ պատերազմելու: Փարզա անունով մի սար կա, ճակատամարտը այնտեղ տեղի ունեցավ: Ահրամազդն ինձ օգնեց, Ահրամազդի շնորհիվ իմ բանակը Վահյազդատայի բանակից բավական մարդ սպանեց: Գարմապադա ամսի

¹ 25 մայիսի 521 թ. թ. ա.:

5-ն՝ էր, երբ ճակատամարտը տեղի ունեցավ: Նա թե Վահ-
յազդատային, և թե այն մարդկանց, որոնք նրա ամենամե-
ծավորներն (համահարզներ) էին բռնեց:

§ 43

Գարեհ թագավորն ասում է.— Հետո ես այն Վահյազդա-
տային և այն մարդկանց, որոնք նրա առաջին մերձավորներն
էին Հուվադայշայա անունով քաղաք կա Փարսում, այնտեղ
նրանց ցից հանեցի:

§ 44

Գարեհ թագավորն ասում է.— Այս է իմ կատարածը
Փարսում:

§ 45

Գարեհ թագավորն ասում է.— Այն Վահյազդատան, որը
իրեն Քարգիյա էր կոչում մի բանակ ուղարկեց Արախոզիա
փարսեցի իմ ծառայի, Արախոզիայի սատրապի՝ Վիվանա-
յի ղեմ և մի մարդ նրա (բանակի) վրա զլխավոր կարգեց և
նրանց այսպես ասաց. «Գնացեք ջարդեք Վիվանային և այն
բանակը, որը Գարեհին է թագավոր ճանաչում»: Ապա Վահ-
յազդատայի ուղարկած բանակը դուրս ելավ Վիվանայի ղեմ
ճակատամարտի:

Կապիշականիշ կոչվող ամրոց կա. ճակատամարտը տե-
ղի ունեցավ այնտեղ. Ահրամազդն ինձ օգնեց. Ահրամազդի
շնորհիվ իմ բանակը այն ապստամբ բանակից բավական
մարդ սպանեց: Անամակա ամսի 13-ն էր², երբ ճակատա-
մարտը տեղի ունեցավ:

¹ 16 հուլիսի 521 մ. թ. ա.:

² 29 դեկտեմբերի 521 մ. թ. ա.:

§ 46

Գարեհ թագավորն ասում է.— Նորից ապստամբները հա-
վաքվեցին և Վիվանայի ղեմ ճակատամարտի դուրս ելան:
Գանդուտավա անունով դավառ կա. այնտեղ ճակատամարտ
տվեցին: Ահրամազդն ինձ օգնեց: Ահրամազդի շնորհիվ իմ
բանակը այն ապստամբ բանակից բավական (մարդ) սպա-
նեց: Վիլայնա ամսի 7-ն էր¹, երբ ճակատամարտը տեղի
ունեցավ:

§ 47

Գարեհ թագավորն ասում է.— Հետո այն մարդը, որը այն
բանակի զլխավորն էր, որին Վահյազդատան ուղարկել էր Վի-
վանայի ղեմ, սակավաթիվ հեծյալներով փախավ. Արշադա
անունով ամրոց կա Արախոզիայում գնաց այնտեղ: Այն ժա-
մանակ Վիվանան բանակով նրա ետևից գնաց: Այնտեղ բռնեց
նրան և նրա ամենամերձավորներին (զլխավոր մերձավորնե-
րին), (և) սպանեց:

§ 48

Գարեհ թագավորն ասում է.— Այնուհետև երկիրը իմը
դարձավ: Այս է իմ կատարածը Արախոզիայում:

§ 49

Գարեհ թագավորն ասում է.— Այն ժամանակ, երբ ես
գտնվում էի Փարսում և Մեդիայում բարելոնացիները երկ-
րորդ անգամ ապստամբեցին իմ ղեմ: Մի մարդ Արխա անու-
նով, հայ Հալդիտայի որդին Բարելոնում ապստամբեց: Բա-
րելոնիայի մեջ Դուրբալա անունով մի վայր կա. այնտեղ ա-
պստամբեց: Նա ժողովրդին այսպես էր խաբում. «Ծս նա-
բուկուդրաշարան եմ նաբունախտայի որդին»: Ապա բարելո-
նացիները ապստամբեցին իմ ղեմ (և) անցան Արխայի կող-

¹ 21 փետրվարի 521 մ. թ. ա.:

մը: նա գրավեց Բաբելոնը. նա Բաբելոնում թագավոր դարձավ:

§ 50

Գարեհ թագավորն ասում է.— Այնուհետև ես Բաբելոն ուղարկեցի մի բանակ, որին հրամանատար կարգեցի Վինդաֆարնա անունով մի փարսեցի, Իմ ծառային (հպատակին): Այսպես նրանց պատվիրեցի. «Գնացեք ջախջախեցեք բաբելոնի բանակը, որը ինձ չի ճանաչում»: Հետո Վինդաֆարնան բանակով գնաց Բաբելոնի: Ահրամազդն ինձ օգնեց. Ահրամազդի շնորհիվ Վինդաֆարնան ջարդեց բաբելոնացիներին և (նրանց) գերի վերցրեց: Մարգալանա ամսի 22-ն էր¹, երբ նա գերի վերցրեց այն Արխային, որը իրեն նաբուկոդոնոսը բռն էր կոչում և այն մարդկանց, որոնք նրա մերձավորագույն համախոհներն էին²: Այնուհետև ես հրամայեցի (որպեսզի) այն Արխային և նրա մերձավորագույն համախոհներին Բաբելոնի մեջ ցից հանեն:

ԱՌՐՐՐՐԳ ԵՅՈՒՆԱԿ

§ 51

Գարեհ թագավորն ասում է.— Այս է իմ կատարածը Բաբելոնում:

§ 52

Գարեհ թագավորն ասում է.— Շնորհիվ Ահրամազդի այս է իմ կատարածը նույն տարում³: Թագավոր դառնալուց հետո ես մղել եմ 19 ճակատամարտ: Ահրամազդի շնորհիվ ես նրանց պարտության մատնեցի և 9 թագավոր գերի վերցրեցի. Մեկը Գառամատա անունով մոզ էր, նա ստելով այսպես ասաց. «Ես Բարդիյան եմ, Կյուրոսի որդին» նա Փարսը ապրտամբեցրեց:

¹ 27 նոյեմբերի 521 մ. թ. ա.:

² Դավակիցներ:

³ Մեկ տարվա ընթացքում:

Մեկը՝ Աթրինա անունով, խուզեստանից էր, նա ստելով այսպես ասաց. «Ես խուզեստանի թագավորն եմ»: նա խուզեստանը ապստամբեցրեց:

Մեկը՝ Նագինտաբիր անունով, Բաբելոնացի. նա ստելով այսպես ասաց. «Ես նաբուկոդոնոսի շարան եմ նաբուկոդոնոսի որդին»: նա Բաբելոնը ապստամբեցրեց:

Մեկը՝ Մարտիյա անունով, փարսեցի: նա ստելով այսպես ասաց. «Ես Իմանիշն եմ խուզեստանի թագավորը»: նա խուզեստանը ապստամբեցրեց:

Մեկը՝ Ֆրավարտիշ անունով, Մեդացի: նա ստելով այսպես ասաց. «Ես իշաթրիտան եմ Հուվախշաթրիայի սերունդից»: նա Մեդիան ապստամբեցրեց:

Մեկը՝ Չրսսանթախմա անունով, Ասագարթցի. նա ստելով այսպես ասաց. «Ես Ասագարթիայի թագավորն եմ. Հուվախշաթրիայի տոհմից»: նա Ասագարթիան ապստամբեցրեց:

Մեկը՝ Ֆրագա անունով, Մարգիանցի. նա ստելով այսպես ասաց. «Ես Մարգիանայի թագավորն եմ». նա Մարգիանան ապստամբեցրեց:

Մեկը՝ Վահյազդատա անունով, փարսեցի նա ստելով այսպես ասաց. «Ես Բարդիյան եմ Կյուրոսի որդին». նա Փարսը ապստամբեցրեց:

Մեկը՝ Արխա անունով, հայ. նա ստելով այսպես ասաց. «Ես նաբուկոդոնոսի շարան եմ նաբուկոդոնոսի որդին» նա Բաբելոնը ապստամբեցրեց:

§ 53

Գարեհ թագավորն ասում է.— Այս 9 թագավորներին ես գերեցի այն ճակատամարտերում:

§ 54

Գարեհ թագավորն ասում է.— Այն գավառները, որոնք ապստամբեցին՝ սուտը նրանց ապստամբ դարձրեց, որովհետև նրանք (խռովարարները, ինքնակոչները) խաբում էին ժողովրդին: Ապա Ահրամազդը նրանց ինձ հանձնեց. ինչպես իմ կամքն էր նրանց հետ այնպես էլ վարվեցի:

Դարեհ թագավորն ասում է.— Դու որ առաջիկայում թագավոր լինես, քեզ ստից լավ պաշտպանիր: Այն մարդուն, որը ստախոս լինի, նրան խիստ պատժիր. եթե այսպես մտածես իմ երկիրը անվնաս կկենա:

§ 56

Դարեհ թագավորն ասում է.— Այս է իմ կատարածը, Ահրամազդի շնորհիվ, մեկ տարվա ընթացքում: Դու որ հետագայում կարդաս այս արձանագրությունը հավատա իմ կատարածին, այն սուտ չկարծես:

§ 57

Դարեհ թագավորն ասում է.— Ահրամազդը վկա, որ այս ճշմարտություն է, սուտ չէ, որ իմ կողմից կատարվել է մեկ տարվա ընթացքում:

§ 58

Դարեհ թագավորն ասում է.— Շնորհիվ Ահրամազդի ես դեռ շատ գործեր եմ կատարել, որոնք գրված չեն այս արձանագրության մեջ: Այն պատճառով չեն գրվել չլինի թե այն ով հետագայում այս արձանագրությունը կարդա նրան իմ կատարածը շատ թվա, որ նա չհավատա (և) այն սուտ կարծի:

§ 59

Դարեհ թագավորն ասում է.— Մինչև այժմ եղած նախկին թագավորները շունեն կատարած այնքան, ինչքան Ահրամազդի շնորհիվ կատարվել է իմ կողմից միայն մեկ տարվա ընթացքում:

Դարեհ թագավորն ասում է.— Այժմ դու կհավատաս իմ կատարածին, ուստի մի թաքցնիս եթե այս հրովարտակը շթաքցնես (և) ժողովրդին հաղորդես Ահրամազդը քեզ բարեկամ կլինի և քո սերունդը կբազմապատկվի և կապրես երկար:

§ 61

Դարեհ թագավորն ասում է.— Եթե այս հրովարտակը թաքցնես և ժողովրդին չհաղորդես, թող Ահրամազդը քեզ սպանի և թող քեզ սերունդ չլինի:

§ 62

Դարեհ թագավորն ասում է.— Այս է իմ կատարածը միայն մեկ տարվա ընթացքում: Կատարեցի Ահրամազդի շնորհիվ Ահրամազդն ինձ օգնեց և մյուս աստվածները որ կան:

§ 63

Դարեհ թագավորն ասում է.— Այն բանի համար Ահրամազդն ինձ օգնեց և այլ աստվածներ որ կան, որովհետև ոչ շար էի, ոչ ստախոս էի, ոչ կեղեքիչ էի, ոչ ես, ոչ իմ տոհմը: Ոչ ունևորին, ոչ անկարողին չեմ կեղեքել: Այն մարդը, որ իմ թագավորական գերդաստանի հետ համագործակցեց նրան լավ շահեցի, այն որ մեղավոր էր նրան խիստ պատժեցի:

§ 64

Դարեհ թագավորն ասում է.— Դու, որ հետագայում թագավոր լինես այն մարդուն, որը ստախոս լինի և այն ով բռնակալ լինի, նրան բարեկամ մի լինի և դաժանորեն պատժիր:

§ 65

Դարեհ թագավորն ասում է.— Դու, որ հետագայում այս արձանագրութունը, որ ես գրել եմ և այս պատկերները տեսնես շինի թե փշացնես, ինչքան կարող ես պահպանիր:

§ 66

Դարեհ թագավորն ասում է.— Եթե այս արձանագրութունը և այս պատկերները տեսնես և չփշացնես և որքան կարողութուն ունես այն չպահպանես Ահրամազը քեզ կպատժի, քեզ սերունդ չի լինի, և այն ինչ կատարես Ահրամազըն այն կնսեմացնի:

§ 68

Դարեհ թագավորն ասում է.— Սրանք են այն մարդիկ, որոնք այնտեղ էին, երբ ես Գառամատա մոզին, որը իրեն Բարդիշա էր կոչում սպանեցի: Այն ժամանակ այս մարդիկ համագործակցեցին ինձ. Վինդաֆարնան Վայասպարայի որդին, փարսեցի. Ուտանան Թուխրիի որդին, փարսեցի, Գաուբարուվան Մարդունիայի որդի, փարսեցի. Վիդարնան Բագաբուզանի որդին, փարսեցի, Բագաբուխշան Գադուհայի որդին փարսեցի, Արդումանիշ Վահուկայի որդին, փարսեցի:

§ 69

Դարեհ թագավորն ասում է.— Դու, որ հետագայում թագավոր լինես պաշտպանիր այս մարդկանց գերդաստանը:

§ 70

Դարեհ թագավորն ասում է.— Ահրամազդի շնորհիվ այս արձանագրութունը գրեցի այլ ոճով... որ նախկինում չի եղել:

նագրութունը ինձ համար...

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՍՅՈՒՆՈՎ

§ 71

Դարեհ թագավորն ասում է.— Այս է իմ կատարածը 4-րդ և 5-րդ տարում այն բանից հետո, երբ ես թագավոր դարձա: Խուզեստան անունով գավառ կա, իմ դեմ ապստամբեց: անունով մի մարդ, Խուզի (խուզեստանցի) նրանք գլխավոր կարգեցին: Ապա ես Խուզեստան ուղարկեցի բանակը. Գաուբարուվա անունով, փարսեցի, իմ ծառային նրանց վրա գլխավոր կարգեցի: Ապա Գաուբարուվան բանակով շարժվեց Խուզեստան և խուզեստանցիներին դեմ ճակատամարտ տվեց. նա ջախջախեց խուզեստանցիներին և գերի վերցրեց այն մարդուն, որը նրանց գերագույնն էր և ինձ մոտ բերեց. և ես նրան սպանեցի. հետո գավառը դարձավ իմը:

§ 72

Դարեհ թագավորն ասում է.— Ահրամազդին պաշտեցի, Ահրամազդի շնորհիվ ինչպես իմ կամքն էր, նրանց հետ այնպես վարվեցի:

§ 73

Դարեհ թագավորն ասում է.— Ով Ահրամազդին կպաշտի մինչև որ.

§ 74

Դարեհ թագավորն ասում է.— Բանակով արշավեցի Սըկյութիա ծովի այն կողմը, որ սրանկյուն

¹ Արձանագրութան հետագա տողերը խիստ աղճատված են:

գլխարկ են դնում սկյութացիներին շարդեցի, մի մասին էլ գերի վերցրի. Սկունխուա անունով նրանց գերագույնին բռնեցին և ինձ մոտ բերեցին: Ուրիշ մեկին, ինչպես իմ կամքն էր գերագույն կարգեցի: Այա երկիրը իմը դարձավ:

§ 75

Դարեհ թագավորն ասում է.— Հետո Ահրամազդը Ահրամազդին պաշտեցի.... Ահրամազդի շնորհիվ ինչպես իմ կամքն էր այնպես վարվեցի:

§ 76

Դարեհ թագավորն ասում է.— Ով Ահրամազդին պաշտի նրա գերգաստանը

ԱՇԽԱՐՀԱՊԲԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

Ասուրեհասան	Մակա
Ատղաբի	Մարդիանա
Արաբիա	Մարուշ
Արախոզիա	Մեզիա
Արտհադրիշ	Մուզրայ
Աբբել	
Արմինա	Յուտիյա
Արշադա	
Աուտիարա	Նիսայա
Բաբելոն	Պատիզրաբանա
Բահարիա	Պարթևասան
Գանդարա	Ռագա
Գանդուտավա	Ռախա
Դուբայա	Սաթագուշ
	Սիկայավատիշ
Զագանա	Սկյութիա
Զրանկա	Սոդդիա
Զուգա	Սպարդա
Քարավա	Վարկանա
	Վիշպաուազատիշ
Իզարա	
	Տիզրա
Խոբեզմ	
Խուզեստան	Ույամա
	Ուֆրատուզա
Կապադոկիլիա	
Կապիշահանիշ	Փարգա
Կամպադա	Փարս
Կունդուբուշ	Փայիշիահուզարդիա
	Փիշիյավազա
Հազմաթանա	
Հարուխիա	Քուզանազա
Հունաստան	
Հուստույնայա	

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աթրինա	Հալղիտա
Աինիրա	Հուլախաթրիա
Անրամազդ	Մարդունիյա
Արզումանիշ	Մարտիյա
Արխա	
Արյարամեն	Նաբուկոդոնոսորա
Արշամա	Նաբունախտա
Արտավազդիյա	Նադինտարիբ
Աքեմեն	
Աքեմենյան	Սկունիտա
Բագարիգնա	Չինչիիրա
Բադարուխշա	Չիշվիշ
Բարդիյա	Չիսսանիթախմա
Փաուրարուվա	Վայասպարա
Փաումատա	Վահյաղդատա
	Վահուկա
Պաղարշիշ	Վաումիտա
Պաղուհյա	Վիդարնա
Պարեն	Վինդաֆարնա
	Վիվանա
Քախմասպաղա	Վշտասպ
Քուխրի	
Իմանիշ	Ուպազարամա
Իշաթրիտա	Ուտանա
Կամրիս	Ֆրադա
Կյուրոս	Ֆրավարաիշ

ԻՐԱՆԱԿԱՆ ԱՄՍԱՆՈՒՆՆԵՐ

Ադուկանիշ	Թախզարշիշ
Աթրիադիա	Թարուվահարա
Անամակա	Թուրավահարա
Ասսիյադիյա	Մարգաշանա
Բագայադիշ	Վիյախնա
Փարմասպաղա	



ԳԱՐԵՀ ՎՇՏԱՍՊԻ ԲԻՍԵՔՈՒՆՅԱՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հրատ. խմբագիր՝ Ս. Պ. Համբարձումյան
Տեխնիկական խմբագիր՝ Լ. Ա. Հովասափյան
Վեջստուգող սրբագրիչ՝ Լ. Մ. Բաղայյան

ՎՅ 09514

Պատվեր 96

Տպաքանակ 600

Հանձնված է արտադրության 1/11 1964 թ.:
Ստորագրված է տպագրության 5/111 1964 թ.:
Թուղթ՝ $34 \times 108^{1/32}$ ՝ Տպագր. 2=1,65 պայմ. մամուլ:
Հաշվ.-հրատ. 1,2 մամուլ:
Գինը՝ 3 կ.:

Երևանի պետական համալսարանի հրատարակչության տպարան:
Երևան, Աբրովյան փող. № 104: